



Together in Partnership: 25 Years and Beyond
25-ամյա սերտ գործընկերություն և նոր հեռանկարներ



The U.S. Embassy in Armenia

Մամուլի հաղորդագրություն

ԱՄՆ դեսպանատունը և COAF-ն ամփոփեցին անգլերենի «Աքսես» ծրագիրը

ԵՐԵՎԱՆ, 24.07.2017 Թ. - Հայաստանում ԱՄՆ դեսպանատունը և Հայաստանի մանուկներ հիմնադրամը (COAF) ամփոփեցին ԱՄՆ պետքարտուղարության անգլերենի ուսուցման «Աքսես» միկրոկրթաթոշակային ծրագիրը:



«Աքսես» ծրագրի ամառային ավարտական ճամբարի ընթացքում ծրագրի 102 մասնակիցները ներկայացրին անցած ճանապարհը և ավարտական վկայականներ ստացան:

Հայաստանում ԱՄՆ դեսպանատան և COAF-ի համագործակցությունը անգլերեն լեզվի դասավանդման ծրագրերի շրջանակներում շարունակական բնույթ է կրում. սա համագործակցության երրորդ փուլն է, որին մասնակցել է Հայաստանի 3 մարզի 100-ից ավելի դպրոցական: 2011 թ. ի վեր ծրագրի շահառու է դարձել 13-ից 16 տարեկան պայծառ, տնտեսապես խոցելի 300 աշակերտ:

«COAF-ը հատուկ փիլիսոփայություն ունի՝ երեխաների միջոցով փոխել մեր ու նրանց ապագան՝ ավելի լավը դարձնելով: Ու մենք համագործակցում ենք բոլոր այն տեղական ու միջազգային կառույցների հետ, որոնց գործունեությունը համահունչ է մեր ռազմավարությանն ու տեսլականին»,- ասաց Հայաստանի մանուկներ հիմնադրամի ծրագրերի տնօրեն **Էսթեր Հակոբյանը:**



2015-2017 թթ. ծրագիրն իրագործվել է Արագածավան (Արագածոտնի մարզ), Հացիկ (Արմավիրի մարզ), Թումանյան, Աքորի և Դեբետ (Լոռու մարզ) համայնքներում: Համագործակցության նպատակն է խրախուսել անգլերենի ուսուցումը Հայաստանի գյուղական համայնքներում, ինչպես նաև խրախուսել երիտասարդներին՝ մասնակցելու իրենց համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման գործին:

Անգլերենից համապարփակ գիտելիք ստանալուն զուգահեռ՝ «Աքսես» միկրոկրթաթոշակային ծրագրի մասնակիցները հմտություններ են ձեռք բերում երեք այլ հիմնական ուղղություններով՝ ԱՄՆ մշակույթ և ժողովրդավարական արժեքներ, անձնային աճ, համայնքային ծառայություն:

«Հայաստանում մեզ օժանդակող կառույցը COAF-ն է, որի հետ մենք շատ արդյունավետ ենք համագործակցում, ու շատ ուրախ ենք, որ նման գործընկեր ունենք Հայաստանում: Դեսպանատանն արդեն ունենք «Աքսես» շրջանավարտ, մեր շրջանավարտները նաև մասնակցում են «FLEX» ծրագրին և հաջողություններ են գրանցում: Մեր շրջանավարտներից շատերն իրենց ձեռք բերած գիտելիքների շնորհիվ ընդունվում են Ամերիկյան համալսարան,

ԵՊՀ և շատ այլ համալսարաններ»,- նշեց ԱՄՆ դեսպանատան հասարակայնության հետ կապերի բաժնի տնօրեն Ժաքլին Դիլին:



Լեզվի դասընթացից բացի, նախաձեռնությունը կենտրոնանում է նաև տեղական մասնագետների կարողությունների զարգացման վրա՝ գյուղի ուսուցիչներին ընդգրկելով որպես Աքսես ծրագրի դասավանդողների օգնականներ:

Այս համալիր ծրագրի անբաժանելի մասն են կազմում նաև լեզվի ուսուցմանը նպաստող լրացուցիչ միջոցառումները, այդ թվում՝ անգլերենի ամառային ճամբարները: 2017 թ. ամառային ճամբարը յուրատեսակ ավարտական հանդես է, որի ընթացքում գյուղաբնակ երիտասարդները դրսևորում են իրենց սովորածը և հանդես գալիս ելույթներով ու ներկայացումներով, ցուցադրում իրենց տաղանդն ու ընկերանում մյուս համայնքների իրենց տարեկիցների հետ:

* * *



Together in Partnership: 25 Years and Beyond
25-ամյա սերտ գործընկերություն և նոր հեռանկարներ



The U.S. Embassy in Armenia

Հայաստանի մանուկներ հիմնադրամը (COAF) բարեգործական կազմակերպություն է, որի նպատակն է բարձրացնել Հայաստանի գյուղաբնակների կյանքի որակը համայնքային զարգացման երեխայակենտրոն ծրագրերի միջոցով: Հիմնադրամի համակողմանի ծրագրային մոդելի իրագործումը սկսվել է 2004թ., և այդ ժամանակից ի վեր իրականացվում են կրթական, առողջապահական, սոցիալական և տնտեսական ծրագրեր, ինչպես նաև հիմնանորոգվում են համայնքների համար կենսական նշանակություն ունեցող ենթակառուցվածքները: Այս ծրագրերի շահառուներն են Հայաստանի Արմավիրի, Արագածոտնի, Լոռու, Գեղարքունիքի, Շիրակի և Տավուշի մարզերի 44 համայնքների ավելի քան 67,000 բնակիչները:

2015 թ. սկսած՝ COAF-ը մշակել և իրագործում է նոր տեսլական՝ ՄՄԱԸՆ նախաձեռնություն: ՄՄԱԸՆ-ը կրթության միջոցով առաջխաղացում է ապահովելու գյուղական աշխարհի համար, ինչի արդյունքում շահում են անհատները, հասարակությունը և միջավայրը: ՄՄԱԸՆ-ը կդառնա զարգացման օրինակելի մոդել և կկրկնօրինակվի Հայաստանի այլ մարզերում և համայնքներում: